

- 35 Բաց ի սոցանէ զայլ պէսպէս տետրակ
Եւ գիրք ինչ որով առնէ ոք կրտակ,
Տըպէր ի շահիլ միայն զիւր վաստակ
Առանց իւր անուան զի չէր ինչ պիտակ:
- 36 Յայս գործ մեծածախ եւ տարժանական
Չունելով զայլ ոք ինքեան օգնական,
Տըքնեալ ի գիշեր քրտնէր ի տունջեան
Վաստակօք անձին արգեամբ սեպհական:
- 37 Արդ այսուիկ փոխեալ զինչս իւր իբր համայն
Ի մտեանս ի գիրս եւ ի տրպարան,
Յընչիցն իսկ մասն ինչ Հայք ոմանք կերան,
Քըսակք իւր ապա ողջ դատարկացան:
- 38 Յոյր սակս ի տըպել եւ եւս դադարէր,
Յայնօր տըպագրեալս յարեւելս յըղէր,
Ուր թէպէտ վաճառն այնց ըսկսեալ էր,
Այլ փոյթ զողջն յարծաթ փոխել հընար չէր:
- 39 Պաշարեալ ուրեմն արծաթոյ սովու
Չոչ ոք տեսեալ անդ ինքեան ձեռնտու,
Տագնապէր խոկմամբ յամենայն ժամու
Ոչ գտեալ ըղգեղ սրբտին մեծ ցաւու:
- 40 Իսկ ի տառապիլն անձկութեամբ այսուիկ
Յաւարտ մըտածմանն որ չէր սակաւիկ
Որոշէր թողուլ իսպառ զօվէնէտիկ,
Չողալ գտանել զօհայրենեան բնիկ:
- 41 Բայց ել նա անդրէն ի Հոսմ քաղաք
Չոր առ լաւ զըննել էր տակաւ անյագ,
Ուր ըզպապական դեռ տանէր ըղթագ
Նոյն Բենեղիկտու հայրապետն աւագ: